«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Քառօրյա պատերազմ

ԱՌԱՐԿԱ՝ Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Սամվել Սահակյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Մ. Ծատուրյան

ՄԱՐԶ՝ Լոռի

ՈՒՍ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ « ՀՀ Լոռու մարզի Բազումի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ապրիլյան քառօրյա պատերազմի սանձազերծման պատճառները մի քանիսն էին և թերևս դժվար է ասել, թե որն էր դրանցից ամենագլխավորը:

Նախ՝ սոցիալ տնտեսական բարդ իրավիճակը Ադրբեջանում: Վերջին երկու տարվա ընթացքում նավթի գների աննախադեպ անկում է տեղի ունեցել Ադրբեջանում, որի եկամուտը 90 տոկոսով պայմանավարված է նավթի և գազի արդյունաբերությամբ, այդ պատճառով էլ Ադրբեջանական մանաթը երկու անգամ ենթարկվել էր դևալվացիայի՝ արժեզրկման: Այս ամենը լուրջ խնդիրներից մեկն էր:

Բնականաբար, պետք չէ մոռանալ նաև տարածաժրջանային համատեքստի մասին, այսինքն՝ Մերձավոր Արևելքի ճգնաժամի և ռուս-թուրքական հարաբերությունների իրավիճակի մասին, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախորդ տասնամյակների ընթացքում Ադրբեջանի կառավարությունը արեց ամեն հնարավորն ու անհնարինը՝ իրեն ծուղակի մեջ գցելով, ծայրահեղական հայտարարություններ տարածելով, թե՝ կամ ռազմական գործողությունները կվերսկսվեն, կամ հայկական կողմը պիտի գնա միակողմանի զիջումների: Իսկ սրանք, անշուշտ, զրկում էին իրական բանակցային գործընթացում մեր կողմից զիջումների գնալուց:

Մյուս կողմից վերջին երկու-երեք տարվա ընթացքում Ադրբեջանական կողմը նման ռազմատենչ գործողություններին ու հայտարարություններին զուգահեռ, ավելացնում էր նաև օգտարործվող զենքերի տեսակը և քանակն ու լարվածությունը շփման գծում, այսինքն՝ եթե մի քանի տարի առաջ մենք խոսում էինք դիպույկահարների պատերազմի մասին, հետո՝ հատուկ նշանակության զորքերի պայքարի իսկ հետագայում Ադրբեջանն անցավ ականների ու ականանետների գործողությունների, հրետանու և տանկերի կիրառման, ի վերջո առաջ եկավ այն իրավիճակը, որն ունեցանք ապրիլին: Առավել ևս, որ տեսանելի չէր որևէ արտաքին դերակատարի սկզբունքային մոտեցում, ինչը կարող էր զսպել Ադրբեջանին:

Համենայն դեպս, ակնհայտ էր որ հրամանը տրվել էր Իլհամ Ալիևի կողմից, որն այդ ժամանակ գտնվում է Վաշինգտոնում: Նկատի չունեմ, որ ԱՄՆ էր հրահրող կողմը, հակառակը, կարծում եմ որ Միացյալ Նահանգների կողմից բավական կոշտ զրույցը Ալիևի հետ միմիայն արագացրին գործողությունները: Չի կարելի բացառել նաև, որ Էրդողան-Ալիև հանդիպումը ևս կարող էր դեր խաղալ: Այնուհանդերձ, գլխավոր որոշիչ պատճառը Ադրբեջանի ներսում էր:

Արդյունքում մենք ունեցանք մի իրավիճակ, երբ ապրիլի 2-ի վաղ առավոտյան ադրբեջանական կողմը դիմեց ռազմանակ գործողությունների, որոնք 1994 թվականից մինչև օրս ամենալայնածավալն էին և շատ մոտ էին իրական պատերազմի ձևաչափին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը 25-ամյա զինադադարից հետո հակառակորդի նախաձեռնությամբ Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի և Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի միջև սկսվեցին լայնամասշտաբ ռազմական գործողություններ, որը հետագայում կոչվեց Քառօրյա պատերազմկամ Ապրիլյան պատերազմ: Առավել թեժ մարտեր են ընթացել ռազմաճակատի վերածված առաջնային գծի հարավային (Հադրութ) և հյուսիսարևելյան (Մարտակերտ) ուղղություններով:

- Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ադրբեջանական կողմը կիրառել է իր զինանոցում եղած ռազմական տեխնիկայի գրեթե բոլոր հնարավոր տեսակները:
- Ժամը 9:10-ին հայկական կողմը հայտնել է ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումների մարդկային կորուստների և հյուսիսային հատվածում ոչնչացված մարտական ուղղաթիռի մասին: Կարճ ժամանակ անց՝ հայկական պաշտոնական աղբյուրները հայտնել են ադրբեջանական զրահատեխնիկայի ոչնչացման մասին:
- Ժամը 10:00-ի կողմերը Արցախի պաշտոնական աղբյուրները հայտնել են, որ ադրբեջանցիների կողմից խաղաղ բնակավայրերի հրթիռակոծության հետևանքով Արցախի Մարտունու շրջանի Զորավան գյուղում զոհվել է 12- ամյա Վաղինակ Թաթուլի Գրիգորյանը, ևս երկու երեխա վիրավորվել են և տեղափոխվել հիվանդանոց:

- Կեսօրին ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Արցախի Լևոնարխ գյուղի մոտակայքում ոչնչացվել է ադրբեջանական դիվերսիոն- հետախուզական ջոկատը, և ադրբեջանական կողմը կորուստներ է տվել:
- Ապրիլի 3-ին՝ ժամը 06:00-ից սկսած, առաջնային գծի հարավային ուղղությամբ

Ադրբեջանի զինված ուժերը հրթիռահրետանային միջոցների և զրահատեխնիկայի կիրառմամբ շարունակել է ագրեսիվ ռազմական գործողությունների վարումը։

- Ադրբեջանական կողմը ապրիլի 3-ին, հայտարարություն է տարածել, թե իբր միակողմանի դադարեցնում է կրակը, սակայն շարունակել է մարտական գործողությունները և Մարտակերտի խաղաղ բնակիչների հրետակոծումը։
- ԼՂՀ ՊԲ-ն հայտնել է, որ հայկական ստորաբաժանումները Թալիշի (Արցախ) ուղղությամբ հետ են վերցրել նախորդ օրը կորցրած կարևոր հենակետերից մեկը, հայկական կողմից վիրավորվել է երկու զինծառայող։ Ռազմաճակատի հարավային մասում ոչնչացրել են ադրբեջանական զինված ուժերի երկու տանկ և հետևակի մարտական մեկ մեքենա։
- Ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը շփման գծի ողջ երկայնքով ադրբեջանական կողմը ականանետներով ու հրանոթներով շարունակել է արկակոծել ՊԲ առաջնային դիրքերն ու մերձակա հայկական բնակավայրերը։
- Առավոտյան ժամը 07:00-ի սահմաններում առավել ինտենսիվ հրետակոծություններ են սկսվել շփման գոտու հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով։
- Ադրբեջանական զինուժը կիրառել է ծանր տեխնիկա, այդ թվում նաև՝ ՀԿՌՀ հրանետեր և մարտական անօդաչու թռչող սարքեր։ Սակայն հայ հրետանավորները շարքից հանել են այդ համակարգերը, իսկ ՀՕՊ ստորաբաժանումները խոցել են մեկ հարվածային ԱԹՍ։
- ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը հայտարարել է, որ Մարտակերտի ճանապարհին անօդաչու սարքը ռմբակոծել է Սիսիանի ջոկատի ավտոբուսը, կա 5 զոհ։ Ավտոբուսի մեջ են եղել նաև երկու զյուղապետ։
- Ապրիլի 4-ի լույս 5-ի գիշերը առաջնային գծի հարավային ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերը կիրառել են «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ։
- Ժամը 12.00-ի դրությամբ հաստատվել է հրադադար, դադարեցվել են ռազմական գործողությունները։
- Վիեննայում հանդիպել է ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցով։
- Ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գոտում հիմնականում պահպանվել է ապրիլի 5-ի ժամ 12- ին ձեռք բերված կրակի դադարեցման շուրջպայմանավորվածությունը։

- Ժամը 18:30-ին, ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարևելյան (Թալիշի) ուղղությամբ տեղակայված մարտական հենակետում Ադրբեջանի զինված ուժերի ականանետային կրակից մահացու վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային զինծառայող, 1974թ. ծնված Արմեն Կառլենի Գասպարյանը:
- Ապրիլի 6-ի լույս 7-ի գիշերը ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարևելյան (Թալիշի) ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերը ձեռնարկել են դիվերսիոն հետախուզական գործողություն: Տալով մեկ զոհ՝ հետ են շպրտվել:
- Ապրիլի 8-ին, համաձայն նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության, հայկական և ադրբեջանական կողմերը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ԵԱՀԿ Մինսկի խմբի գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգնականների միջնորդությամբ, իրականացրել են զոհվածների որոնողական աշխատանքներ, որոնց ընթացքում կրակի դադարեցման շուրջ պայմանավորվածությունների խախտում չի արձանագրվել:
- Ապրիլի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովը՝ համաձայն Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև ձեռք բերված պայմանավորվածության, Բաշ Քարվենդ բնակավայրի մոտակայքում իրականացրել է դիակների փոխանակում: Հայկական կողմին հանձնվել է 18 զինծառայողի մարմին:
- Մեկ տարի առաջ՝ ապրիլի 5-ին, Մոսկվայում Հայաստանի և Ադրբեջանի ԶՈՒ ԳՇ պետերը պայմանավորվեցին դադարեցնել ապրիլի 2-ից արցախա- ադրբեջանական շփման գծի երկայնքով ծավալվող ռազմական գործողությունները: Դրանք պատմության մեջ մտան որպես ապրիլյան քառօրյա պատերազմ:
- Ցածր ինտենսիվությամբ ռազմական գործողությունները շարունակվեցին մինչև ապրիլի 28-ը: Այդ մարտերում հայկական կողմը 100-ից ավելի զոհ ունեցավ՝ ինչպես խաղաղ բնակչության, այնպես էլ ԶՈՒ շարքերում: Հակառակորդի վերահսկողությանն անցան Արցախի պաշտպանական գծի հյուսիսարևելյան և հարավային ուղղությամբ երկու ազդեցիկ հենակետեր, այդ հատվածներում ադրբեջանական կողմը մի քանի հարյուր մետրով առաջխաղացում ունեցավ:

- Այդ դրամատիկ, բայց նաև հերոսական դրվագներով իրադարձություններին մեկամյա հեռավորությունից սթափ հայացք նետելով՝ կարելի է վստահ ասել, որ թեև 1994թ. հրադադարի հաստատումից ի վեր սա ամենավտանգավոր սրացումն էր, բայց դասական իմաստով այն պատերազմ չէր: Իրականում քառօրյա այդ մարտերով հայկական բանակի զինվորներն ու սպաները, հետո՝ նաև կամավորականները, սխրանքի, անանձնական նվիրման և ինքնազոհողության աներևակայելի օրինակներ ցույց տալով, կանխեցին հայկական պաշտպանական առաջնագիծը ճեղքելու և հիմնական հարվածային ուժերի ներխուժումն ապահովելու օպերացիան: Քառօրյա մարտերը կարճաժամկետ կտրվածքով կանխեցին վերահաս լայնամասշտաբ պատերազմը, տապալեցին բանակցային գործընթացում բեկում մտցնելու և լուծում պարտադրելու լծակ ստանալու՝ Բաքվի պլանները: Այս տեսանկյունից, չնայած ցավալի զոհերին, տարածքային կորուստներին, «քառօրյա պատերազմը հայկական կողմի համար մեծ չափով հաղթական էր:
- Ադրբեջանի ունեցած միակ շոշափելի առավելությունը հոգեբանական էր. մի քանի հարյուր մետր առաջխաղացումը բարձրացրեց հասարակության՝ դեռևս Արցախյան պատերազմից ընկճված մարտական ոգին և ինչ-որ առումով դարձավ անտրամաբանական մեծ կորուստներն արդարացնելու միջոց: Մինչդեռ քառօրյա պատերազմը հայկական կողմի համար լուծեց մի քանի մարտավարական խնդիրներ:
- 1. Հակառակորդի մոտ ջարդեց հայկական բանակի անմարտունակության, բարոյալքվածության մասին կարծրատիպը, ինչպես նաև ձևավորված խոր համոզմունքը, թե սպառազինության հաշվին ունակ է մեկ հարվածով ծնկի բերել հայկական կողմին: Ադրբեջանի իշխանությունները և հասարակությունը հասկացան, թե ինչ է արժենալու նոր պատերազմի սանձազերծումը:
- 2. Ձախողված այդ հարձակումը թույլ տվեց բացահայտել և չեզոքացնել առաջնագծում ու պաշպանության ամբողջ համակարգում եղած թույլ օղակները, հասկանալ հակառակորդի տակտիկական առանձնահատկությունները:
- 3. Ադրբեջանը կորցրեց, այսպես կոչված, «անակնկալի էֆեկտը»: Այդ մեթոդն այլևս չի աշխատելու: Դրանում Ադրբեջանը թերևս լիովին համոզվեց այս տարվա փետրվարի 25-ին արցախյան ճակատում երկու ուղղություններով իրականացրած դիվերսիոն ներթափանցման անհաջող և իր համար մարդկային մեծ կորուստների հանգեցրած

փորձերից հետո:

- 4. Դրդեց հայկական կողմին վերջապես քայլեր ձեռնարկել ռազմական տեխնոլոգիական արդյունաբերության ստեղծման, ներքին ռեսուրսների մոբիլիզացման փիլիսոփայության վրա խարսխված «ազգ-բանակ կոնցեպցիան գործարկելու ուղղությամբ: Մուլտիպլիկատիվ էֆեկտով այն կարող է ազդել բոլոր կենսական ոլորտների զարգացման վրա:
- 5. Հասարակությանը, հատկապես՝ լրատվադաշտին սովորեցրեց՝ ինչ է հիբրիդային պատերազմը, բարձրացրեց զգոնությունը՝ հակառակորդի տեղեկատվական մանիպուլյացիոն թակարդներում չհայտնվելու առումով, սովորեցրեց ռազմաճակատային լրատվության հետ աշխատելու նրբությունները: Բանակի բաց տեղեկատվական քաղաքականության պայմաններում սա կարևոր ձեռքբերում է՝ ոչ միայն տեղեկատվական անվտանգության, այլև տեղեկատվական «հարձակման առումով: Այդ պատերազմից հետո բանակը հասարակությունից էլ ավելի կտրելու՝ Ադրբեջանի քաղաքականության պատճառով հայկական ԶԼՄ-ներն ու պաշտոնական աղբյուրներն ադրբեջանցիների համար ենթագիտակցորեն դառնում են ավելի արժանահավատ, քան սեփական պետության, պաշտպանական գերատեսչության տեղեկատվական պրոդուկտը: Իսկ դա Ադրբեջանի հասարակական տրամադրություններն ավելի կառավարելի դարձնելու միջոց է:
- 6. Ադրբեջանը մեծ հաշվով կորցրեց ԼՂ կարգավորման գործընթացում պատերազմի շանտաժային խաղաքարտն օգտագործելու հեռանկարը: Չնայած ներկայիս փորձերին՝ այն այլևս ո'չ հայկական կողմի և ո'չ էլ միջնորդ երկրների վրա չի ազդում: Ադրբեջանն ապացուցեց, որ արցախյան հարցը ռազմական ճանապարհով լուծելն իր համար նույնքան բարդ է, եթե՝ ոչ ավելի, քան բանակցություններով: Ապրիլյան ձախողման պատճառով Բաքուն պատերազմական շանտաժի կիրառման առումով կորցրեց այնպիսի կարևոր դաշնակցի, ինչպիսին Ռուսաստանն է: Նոր հարձակում, որն այս անգամ իսկապես կարող է մեծամասշտաբ պատերազմի հանգել, Մոսկվան թույլ տալ չի ցանկանում:
- 7. Այդ «պատերազմով», հատկապես՝ դրա ընթացքում խաղաղ բնակիչների, գերեվարված հայ զինծառայողների նկատմամբ իրականացրած գազանային հանցագործություններով Ադրբեջանը հասավ նրան, որ ամրապնդեց միջազգային հանրության համոզմունքն

Արցախն Ադրբեջանի ենթակայությանը վերադարձնելու անթույլատրելության հարցում:

- 8. Ամրապնդեց հայկական կողմի բանակցային դիրքերը: Արդեն 2016թ. մայիսից ակնհայտ դարձավ, որ հայկական կողմը փաստացի հրաժարվում է դրանց շուրջ բանակցություններից՝ դնելով հրադադարի լիակատար վերականգնման նախապայմանը: Ադրբեջանն ի վիճակի չէ դա կատարել, որովհետև դրանով էլ ավելի կամրապնդի առկա ստատուս քվոն: Արդյունքում՝ գործընթացը մտել է կատարյալ փակուղի, որի պատասխանատուն է համարվում Բաքուն՝ հենց ապրիլյան հարձակման արկածախնդրության պատճառով: Ստեղծվել է մի վիճակ, երբ Ադրբեջանը ոչ պատերազմ սկսելու «թույլտվություն» է կարողանում ստանալ, ոչ էլ՝ արդյունքի հասնել բանակցություններով:
- Չնայած այս ամենին՝ «ապրիլյան պատերազմը, որն ավելի ճիշտ կլինի անվանել ապրիլյան քառօրյա հերոսամարտ, երկարաժամկետ հեռանկարում չի կանխել հնարավոր մասշտաբային նոր պատերազմը: Դրա հավանականությունը հիմա նույնքան մեծ է, որքան անցած տարվա ապրիլի 6-ին: Բայց այդ հերոսամարտը լուծեց ամենակարևորը՝ ցույց տվեց, որ այս

  երկրում ապրող մարդը կարող է չլինել լավ քաղաքացի, թերանալ լավ պետություն կառուցելու գործում, բայց ամբողջ էությամբ հայրենապաշտ է և հայրենապաշտպան: Ապրիլյան հերոսամարտն իրականում հայ հասարակությանը հանեց ապրիլյան պատերազմի հաղթանակների դափնիների վրա լեթարգիական քնի վիճակից:

Ապրիլյան չորսօրյա պատերազմի դրդապատճառների քաղաքական ասպեկտները տևական ժամանակ դեռ կքննարկվեն, անշուշտ, առաջ կքաշվեն բազում աշխարհաքաղաքական, տնտեսական և այլ դրդապատճառներ: Սակայն փաստն այն է, որ Ադրբեջանը մի քանի հանգամանք հստակորեն հաշվարկել էր: Անցած տարիների ընթացքում Ադրբեջանը ձեռք էր բերել մեծաքանակ նորագույն զինատեսակներ, դրանք իրենց մեծ վստահություն էին ներշնչել, ընդհուպ, որ դրանք կարող են իրենց հաղթանակ ապահովել: Միաժամանակ նրանք գիտեին, որ հայկական կողմը ևս բավականին ձեռքբերումներ ունի, սակայն դրանց զգալի մասը դեռևս ճանապարհին է: Եթե սրան հավելենք, որ ադրբեջանական բանակի ծախսերը շեշտակիորեն կրճատվել էին, ապա կարելի է ենթադրել, որ, ըստ իրավիճակի, ճիշտ ժամանակն է փորձել բլիցկրիգ (արագ պատերազմ) անել: Ռազմական առումով անհրաժեշտ է ապրիլյան այս պատերազմը մանրամասնորեն վերլուծել, սակայն մի

քանի հանգամանք արդեն կարելի է վստահորեն փաստել: Ակնհայտ է, որ ադրբեջանական կողմը, վերջին երկու տարվա ընթացքում իր ունեցած բոլոր դիվերսիոն- հետախուզական խմբերը, (կատարվել է առնվազն 150 դիվերսիոն ներթափանցման փորձ) ականային, հրետանային և այլ միջոցները գործի դնելով ու ոչնչի չհասնելով, փորձեց լայնամասշտաբ մարտական գործողություններ սկսել: Ինչպես անվանել այս մարտական գործողությունները: Այն, անշուշտ, լայնամասշտաբ պատերազմ չէ: Ոմանք այն անվանում են “հետախուզություն մարտով”, որը որոշակիորեն ճիշտ է: Սակայն դասական իմաստով այդպես չէ: Դեռևս 1990-ականների երկրորդ կեսից ռազմարվեստում կիրառվում է առկա ուժերով, առանց նոր ուժերի ու միջոցների ներգրավման հիմնական հարված հասցնելու մարտավարությունը: Ադրբեջանը այս անգամ հենց նման հարված հասցրեց. օպերատիվ շարվածքում առկա ուժերով ու միջոցներով փորձեց անակնկալ և որոշիչ հարված հասցնել, պլանավորել էր մարտավարական բնագիծը ճեղքելով դուրս գալ օպերատիվ խորություն: Միայն այն հանգամանքը, որ նրանք մարտավարական առաջին գծով չէին բավարարվելու, արդեն նշանակում է, որ սա հետախուզական մարտ չէ: Բացի դրանից՝ ակնհայտ է մի հետաքրքիր առանձնահատկություն ևս: Ադրբեջանական լրատվամիջոցները մինչև կեսօր լռում էին: Կեսօրին միանգամից անցան հարձակողական տեղեկատվական տեղատարափի, ընդ որում, սկզբում անթաքույց հպարտանալով, որ իրենք հարձակվել են և գրավել ինչ-որ բնակավայրեր ու բնագծեր: Սա նշանակում է, որ տեղեկատվական գործողությունները ևս նախօրոք պլանավորված են եղել՝ մարտական գործողություններին համահունչ սցենարով: Ադրբեջանական զորքերի հաջողությունները պետք է ուղեկցվեին համապատասխան տեղեկատվությամբ, սակայն երբ դրանք սկսեցին հաղորդվել ըստ նախնական մշակված պլանի, չէին համընկնում մարտական գործողություններին: Ի դեպ, նույնը արեց նաև թուրքական մամուլը, որը ևս հավանաբար տեղյակ էր ծավալվելիք գործողությունների մանրամասներին: Այդ են վկայում հենց երկու ուղղությունում կենտրոնանալը և այդ ուղղությունների համեմատաբար հարթավայրային մասերում տանկային ուժերով հիմնական հարվածները, օրինակ՝ Սեյսուլանի ուղղությամբ ճեղքման հարվածը տանկերով ու հետևակով: Հարվածների ուղղությունները ենթադրում են, որ հյուսիսից ու արևելքից հասցվող հարվածները Արցախի հյուսիսում նպատակ ունեին գրավելու Մարտակերտը, Սարսանգի ջրամբարով և այլն: Հաջողության դեպքում ադրբեջանական զորքերը համապատասխան զորախմբերով պետք է հարվածներ հասցնեին նաև այլ ուղղություններում: Ըստ ադրբեջանական տվյալների՝ յուրաքանչյուր հատվածում գործի են

դրվել են 1-ին էշելոնի մեկական բրիգադի ուժերն ու միջոցները, որոնք ուժեղացված են եղել հատուկ նշանակության ուժերով՝ ընդհանուր մինչև երկու բրիգադ հատուկ դիվերսիոն խմբերով, լեռնահրաձգային ստորաբաժանումներով, տանկային և հրետանային այլ ուժերով: Յուրաքանչյուր ուղղությամբ նաև կուտակվել էին զգալի տանկային ուժեր: Քանի որ այս դեպքում հասկանալի է, որ ադրբեջանական կողմը շահագրգռված է նվազեցնելու սեփական ուժերի թվաքանակը, ինչը հիմնավորվում է նաև որոշ զինատեսակների կիրառությամբ, որոնք դուրս են կորպուսային ենթակայությունից, ապա հասկանալի և ակնհայտ է, որ ուժերը առնվազն եղել են բրիգադներից մեծ: Բրիգադը այդքան ուժերով արդեն կորպուսային ներուժ ուներ: Այդ մասին է փաստում նաև հակառակորդի կողմից հրետանային կրակի ինտենսիվությունը: Չորս օրվա ընթացքում ըստ որոշ տեղեկությունների հակառակորդը կիրառել է 120մմ-ից բարձր ավելի քան 30 000 հրետանային արկ, ինչը մեկ միջինից բարձր օպերատիվ ռազմագործողության համար նախատեսված զինամթերքի ծախս է: Որպես ելակետային հաշվարկ նշենք, որ մեկ հրետանային համակարգի մարտապաշարը հաշվարկվում է 60-80 արկ: Եթե այս հաշվարկով դիտարկենք ու հաշվենք, որ մեկ հրանոթը կարող է կրակել օրական առավելագույնը մեկ մարտապաշար, ապա ստացվում է, որ մարտական ակտիվ չորս օրում յուրաքանչյուր հրանոթի առավելագույն արագությամբ կիրառման դեպքում եղել է մոտավորապես 100 միավոր 120մմ-ից բարձր հրանոթ: Ավելի ցածր ակտիվության դեպքում, ինչը ավելի հավանական է, կիրառվել է ավելի քան 150 հրանոթ: Ադրբեջանական ԶՈՒ-ն փորձել է դիմել հնարամտության, որը մի քանի անգամ փայլուն է դրսևորվել ռազմարվեստի պատմության մեջ: Հարվածող խմբավորումների առաջին շարակազմում կիրառվել են միայն հատուկ նշանակության ուժեր, այդ թվում՝ փորձ՝ օդային դեսանտ իջեցնել մարտավարական խորքում: Ապրիլի 2-ի առավոտյան խոցված ուղղաթիռը հենց այս փորձի ժամանակ է խոցվել: Այսինքն՝ այդ խմբերը խնդիր ունեին գրավել առաջին բնագծերը կամ բացվածքներ ապահովել այդ բնագծում և միաժամանակ թիկունքից հարված հասցնել գումարտակային խորությանն ու խուճապ առաջացնել: Հիմնական զրահատանկային միջոցները մոբիլ խմբերի հետ գործել են արդեն երկրորդ շարակազմում՝ փորձելով առաջին խմբերի հետ գործել բարձր ներդաշնակությամբ: Գործելով այս կանոններով և ձգտելով քողարկել իրենց հարվածը, որպեսզի ապահովվի անակնկալի գործոնը, ադրբեջանական զորքերը նոր ուժերի ու միջոցների ներգրավումը իրականացրել են ընթացքում՝ մարտավարական խորությունում ունենալով պահեստային ուժեր: Սակայն քանի որ առաջին

դիվերսիոն խմբերի գործողությունները լիարժեք հաջողության չեն հասել, չնայած նրան, որ Թալիշ գյուղում և որոշ դիրքերի թիկունքում դիվերսանտներ եղել են, ապա հիմնական հարվածային ուժերը իրենց խնդիրը չեն կարողացել կատարել: Այսինքն՝ հիմնական հարվածային ուժերի ճանապարհը չի բացվել, ինչպես պլանավորած էր: Այստեղից սկսվել է ադրբեջանական հարվածային խմբավորման պլանների խափանումն ու ներդաշնակության կորուստը: Միայն այս ուղղությամբ շրջափակման մեջ ոչնչացվել է ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատի առնվազն 30 զինվոր: Իսկ որոշ դիրքեր իրենց վրա հարձակումը հաջողությամբ հետ են մղել կամ հակագրոհներով արագորեն վերականգնել են կորցրածը: Նույն սցենարը գրեթե կրկնվել է երկու ճակատում՝ Մարտակերտի ուղղությամբ էլ ոչնչացվել է 2 տանկ և 2 անօդաչու թռչող սարք: Այսինքն՝ հայկական ստորաբաժանումներին հանկարծակիի բերել չկարողանալով՝ հակառակորդը դիմել է ծայրահեղ մեթոդի, այսպես ասած, պլան “Բ”-ի՝ հրետանային ինտենսիվ կրակով գոնե առաջին դիրքերը վերցնելու մարտավարությանը: Իհարկե, նման ինտենսիվ կրակով մի քանի տեղում հակառակորդին հաջողվել է ճեղքել առաջին բնագիծը, սակայն դրանով էլ տապալել է ամբողջ օպերացիան. քանի որ հիմնական ուժերը ոչ մի նշանակալի հաջողության չհասնելով, անգամ մարտավարական որևէ խորություն չգրավելով, ստիպված են եղել դիրքային մարտեր վարել: Տեղում փորձելով ճեղքել պաշտպանական բնագիծը, սակայն այդտեղ ևս ձախողվելով, հակառակորդը ներգրավել է նաև ծանր հրանետներ, որոնք ի սկզբանե չէին կարող նախատեսված լինել՝ հաշվի առնելով դրանց դանդաղաշարժությունը: Հակառակորդը, կիրառելով զրահատեխնիկա, հրետանային միջոցներ, այդ թվում՝ ՄՄ-21 ("Գրադ") տիպի կայանք, հարձակման թիրախ է դարձրել ոչ միայն Պաշտպանության բանակի դիրքերը, այլև խորը թիկունքում գտնվող խաղաղ բնակավայրերը: Այս ուղղությամբ Պաշտպանության բանակի հակաօդայինների կողմից ապրիլի 2-ին ժամը 12:30-ի սահմաններում խոցվել են հակառակորդի մեկ ռազմական ուղղաթիռ և 2 տանկ: Փաստորեն, ադրբեջանական բանակը հիմնական հարվածային ներուժով տապալել է իր օպերատիվ մակարդակի կայծակնային ռազմագործողությունը, որով պետք է ուժեղացված բրիգադներով ճեղքեր վաշտային պաշտպանությունը և դուրս գար մարտավարական խորք: Նույնիսկ երկու մակարդակ բարձր ադրբեջանական ուժերը, փորձելով ամրանալ վաշտային հենակետերի բնագծերում, ենթարկվել են ԼՂՀ Պաշտպանության բանակի գումարտակային ու գնդային ռեզերվների հակահարձակմանը և որոշ տեղերում դրանք կորցրել են: Այն տեղերում, որտեղ ադրբեջանական բանակին հաջողվել է առավելագույնը ջոկի դիրք պահել, դա

հնարավոր է եղել միայն կորպուսային ռեզերվների ներգարվմամբ: Հաշվի առնելով այդ իրողությունը՝ Ադրբեջանը հընթացս գործողությունները տեղափոխեց հյուծման հարթություն՝ հին մեթոդներով հրետակոծելով նաև խաղաղ բնակավայրերը: Սակայն քանի որ այս տարբերակը հաշվարկված չէր ադրբեջանական բանակի կողմից, այն վարվում էր ավելի վատ, քան նույնիսկ տապալված գործողությունը: Սկզբից եթե յուրաքանչյուր տապալումից հետո ադրբեջանական բանակը փորձել է թվաքանակով կատարել իր խնդիրը, սակայն չի հաջողվել: Յուրաքանչյուր միջոցի կիրառման անհաջողությունից և ամեն մի գրոհից հետո ձեռնարկելով նորանոր գրոհներ ու փորձելով անպայման հաջողության հասնել քանակական գերակշռության և տեխնիկական գործոնների հաշվին՝ ադրբեջանական բանակը պատերազմը տեղափոխել է իր համար արդեն ոչ ձեռնտու հարթություն: Քիչ-քիչ մարտի մեջ են մտցվում հրանետներ, ծանր հրետանի և այլն, սակայն քանի որ ամեն ինչ վատ էր պլանավորված, անգամ նորագույն համակարգերը, ինչպիսիք են մարտական ԱԹՍ-ները, կիրառվում են ոչ համակարգային, այլ անհատական, տալով ցածր արդյունք: Հատկապես զարմանալի էր “Սմերչ” համակարգերի բացարձակ անհաջող կիրառությունը: Հատկապես անհասկանալի էին մարտական ԱԹՍ-ներով տանկերի ու առանձին մեքենաների խոցման փորձերը: Դրանցով լուծվել են միայն մարտավարական խնդիրներ: Կիրառվել է մոտավորապես 15 հարվածային ԱԹՍ, որից միայն մեկն է եղել արդյունավետ, այն էլ քաղաքացիական ավտոբուսին է հարված հասցրել: Բացի դրանից՝ մնացած հարվածները կամ եղել են անարդյունավետ, կամ ոչ նպատակահարմար, երկուսին էլ ՀՕՊ ուժերը խոցել են: Իհարկե, սրանք լուրջ օպերատիվ խնդիրներ լուծելու համար նախատեսված միջոցներ են, սակայն ճիշտ չեն կիրառվել: Քանի որ այդ դիրքային մարտերը ադրբեջանական բանակի համար արդեն վերածվել էին պատվի խնդրի, ապա ամեն ինչ նետվում էր մարտի՝ միայն թե վաշտային հենակետերն ու խրամատները գրավվեին կամ գրավածները պահվեին հայկական հակագրոհներից: Փաստորեն, ադրբեջանական ԶՈՒ-ն, բացի մարտական ինքնաթիռներից, կիրառեց բոլոր տեսակի այլ միջոցները, թեկուզ ոչ ամբողջական ծավալով կիրառեց օպերատիվ մակարդակի ամբողջ զինանոցը: Դրան հակառակ՝ հայկական կողմը առհասարակ այս ենթակայության ուժեր չի կիրառել, ավելին՝ անգամ բանակի ռեզերվները չեն ներգրավվել: Կայծակնային գործողության տապալումից հետո Ադրբեջանը անցավ հյուծման կռվի: Ադրբեջանը, այո, ուներ տեխնիկական որոշակի առավելություն և դա ակնհայտ էր, սակայն այն այնքան մեծ չէր, որքան պատերազմի անցնող փուլում: Շուրջ երկու օր տևած հյուծման մարտերից հետո Ադրբեջանը, սպառելով ստեղծված

այդ զորախմբերի հիմնական ներուժը, գնաց հրադադարի:

Կրակի դադարեցման պայմանավորվածության պահի դրությամբ ադրբեջանական կողմը կորցրել էր 24 տանկ, 1 SOU-1Ահրանետ,
1 ՀՄՄ, 6 զրահապատ մեքենա, 1 ինժեներական մեքենա, 1 «Գրադ» ՀԿՌՀ, 2 ուղղաթիռ և 12 անօդաչու թռչող սարք:



Հատուկ նշենք, որ հայկական կողմը կորցրել է մեկ ԱԹՍ: Արցախյան կողմի տեխնիկական հագեցվածությունը այնքան խիտ էր, որ գործնականում անհնար էր առանց մեծ կորուստների առաջ շարժվել, ինչն էլ ապացուցվեց կորուստների մեծ թվաքանակով: Դա ապահովվել էր նաև նրանով, որ զորքերը նախկին լարումների հանգամանքներով, ինչպես նաև հետախուզական տվյալների հիման վրա գրեթե լիովին բացազատված էին իրենց բնագծերում: Չորսօրյա մարտական գործողությունները փաստեցին, որ ադրբեջանական ԶՈՒ-ն, բրիգադային ուժեղացված զորախմբերով, ներառյալ՝ վերադասի կողմից տրված ուժերն ու միջոցները, հարձակում ձեռնարկելով ըստ էության վաշտային հենակետի վրա՝ հընթացս չի կարողացել գրավել այն, անգամ դուրս չի եկել վաշտի պաշտպանության հենակետի ամբողջ խորքը:

Ադրբեջանական զորախմբերը մարտական գործողությունների երկրորդ օրը կիրառել են օպերատիվ ենթակայության ուժեր: Ծանր հրանետները, մարտական ԱԹՍ-ները և “Սմերչ”

համակարգերը անգամ բրիգադի վերադասի ենթակայության ներքո չեն, այսինքն՝ կիրառվել են երկու-երեք աստիճան բարձր հրամանատարության կողմից տրված ուժեր և միջոցներ: Փաստորեն, ապրիլի 5-ին ադրբեջանական ԶՈՒ-ն, արցախյան բանակի երկու վաշտային ոչ լիարժեք հենակետ գրավելու համար կիրառելով 2-3 անգամ բարձր մակարդակի, մինչև անգամ 10 անգամ գերազանցող ուժեր, չի կարողացել լուծել մարտավարական խնդիր և ստիպված է եղել դիմակայել հայկական ուժերի հակագրոհներին: Կրակի դադարեցումը այդ սպառումը համալրելու փորձ էր նոր ուժեր ներգրավելու համար, քանի որ լայնածավալ համալրում և զորաշարժեր չէր կարող կատարել: Ադրբեջանական բանակի գործողությունների առանձնահատկությունները. 1. Թույլ էր ադրբեջանական հարձակողական խմբավորումների գործողությունների պլանավորումը, և ցածր է ղեկավարման մարմինների պատրաստությունը: 2. Ադրբեջանական բանակը ուներ ժամանակակից սպառազինության և ռազմական տեխնիկայի հագեցվածություն, սակայն դրանց ոչ նպատակային ու ճիշտ կիրառություն: Դա հատկապես դրսևորվում է մարտական ԱԹՍ-ների և ռադիոտեխնիկական զինվածության, ինչպես նաև մասնակի տեխնիկական առավելության, տանկային, հակատանկային, հեռահար հրետանու և այլ սպառազինությունների հարցում: 3. Անգամ ոչ մեծ քանակով բացազատված զորամասերն ու միավորումները ունեին ոչ հստակ փոխգործակցություն: 4. Մարտավարական ուժերի դեպքում ադրբեջանական բանակը դրսևորեց ռազմարվեստում դասական ու առավել ևս նորարարական մոտեցումների իրականացման անպատրաստություն: 5. Ադրբեջանական բանակը թույլ տվեց մեկ ռազմավարական սխալ՝ ունենալով տեխնիկական առավելություն, հետախուզահարվածային հնարավորություններ, ի սկզբանե զորքերի կառավարման անհաջողությունների պատճառով դրանք սխալ օգտագործեց, դրան հակառակ՝ գնաց մարդկային ռեսուրսով հաջողության հասնելու մարտավարությանը և տալով մեծ թվով զոհեր՝ ոչնչի չհասավ: 6. Ադրբեջանական հասարակությունը պատրաստ չէ հյուծիչ պատերազմի, քանի որ այն իր համար իրականում հայրենական պատերազմ չէ: Ադրբեջանական մամուլը և հասարակությունը լիովին փակ են, չկա ինքնաքննադատություն և սխալների ընդունում, գործում են շաբլոնային մեթոդները: Հայկական բանակի գործողությունների առանձնահատկությունները.

1. Հայկական ստորաբաժանումները արագ և ճկուն են գործում հատկապես խուսավարման և բացազատման հարցերում, այնքան արագ ու ճիշտ, որ, օրինակ, “Սմերչ” համակարգերը առաջին օրը թիրախներ չեն գտել խոցելու համար: Հայկական զորքերը ավելորդ կուտակումներ

չեն առաջացրել: Մարտակարգերի վրա դրանց կիրառությունը արդյունավետ չի կարող լինել: Արձակվել է 1-2 համազարկ: 2. Հայկական կողմի պահեստային ուժերի գործողությունների համակարգը հոկված է և գործում է անխափան: Բանակը իր համալրման խնդիրը կատարում է բարձր մակարդակով: 3. Հայկական բանակի ստորաբաժանումները դրսևորել են մասսայական քաջության դեպքեր: Դիրքեր են եղել որոնք մինչև վերջ կռվել են ու

զոհվել բազմապատիկ ուժերի դիմաց, ՊԲ-ի շարքային զինվորները խոցել են երկու ուղղաթիռ և կան զինվորներ որոնք մի քանի տանկեր են խոցել: Հայկական բանակը, որոշակի տեխնիկական հարցերում զիջելով ադրբեջանական կողմին, գերազանցում է հաղթանակ ապահովող երկու կարևորագույն գործոնով. զորքերի և ռեզերվների մարտական բարձր ոգին և կառավարման բարձր մակարդակը՝ շնորհիվ պատրաստված ու վճռական հրամանատարների ու լավ փորձի::Այս օրերին հայկական աշխարհի և հայ ժողովրդի ապագայի մասին մտորելու լավագույն տեղն Արցախն է: Արցախյան օդում խտացած վտանգն ու սեփական ուժերի հանդեպ վստահությունը ապրելու և գործելու նոր հեռանկարներ են բացում հայ ժողովրդի համար: Ապրիլի սկզբից հայ ժողովրդի հայացքը սևեռվել է դեպի Արցախ, որովհետև այստեղ է կերտվում հայկական պետականության ապագան, ու Արցախյան ճակատի ելքից է կախված նաև հայկական աշխարհի գաղափարախոսությունը:

Մարտական գործողությունների մասին առավել մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանը փորձել է բլից-կրիգի միջոցով արագ հաղթանակի հասնել: Առաջին գծում կուտակած զինտեխնիկայի միջոցով փորձ են կատարել ճեղքել մեր ինքնապաշտպանությունը, այնուհետև միջանցքով տանկերի միջոցով ներթափանցել թիկունք և առաջ շարժվել դեպի Արցախի խորքը: Մարտակերտի մասով կարող էին առաջ անցնել ու փակել Մարտակերտ- Ստեփանակերտ ճանապարհը:

Իրականում այս ամենը կասեցվել է անձնուրաց տղերքի շնորհիվ, որոնց մասին դեռ բազմաթիվ հերոսական պատմություններ կլսենք: Նրանք կասեցրել են լայնամաշտաբ պատերազմը, որը սպառնում էր Հայաստանի գոյությանը: Ապրիլի 2-ին հայկական պետականությունը կանգնել էր լինել-չլինելու հարցի առաջ: Լինել-չլինելու հարցը լուծվել է սահմանին:

«Քառօրյա պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ հայ ժողովրդի միակ պաշտպանն ու դաշնակիցը հանդիսանում է հայկական բանակը: Այն նաև ցույց տվեց, որ հայ ժողովորդի ներուժի համատեղման դեպքում հնարավոր է լայնածավալ խնդիրներ լուծել:

Միֆը, որ ժողովուրդը կխուսափի ներգրավվել նոր պատերազմում, հոդս ցնդեց։ Նույնիսկ կամավորների շրջանում հումոր էր շրջանառվում, որ միայն կաշառքի միջոցով է հնարավոր առաջին գիծ մեկնել։

Այս ամենը խոսում է այն մասին, որ ահռելի մեծ պոտենցիալ կա հայ ժողովրդին միավորելու և հայկական աշխարհ կառուցելու համար, որի հիմնական կենտրոնը կարող է լինել Հայաստանի Հանրապետությունը։ Հենց Հայաստանն է հանդիսանում Արցախն ու Սփյուռքը իրար միավորող գլխավոր օղակը, որի որակական հատկանիշներից էլ կախված է լինելու հայկական աշխարհի ապագան։

Հայաստանի արագընթաց ժողովրդավարացումը հանդիսանում է հայկական աշխարհի ձևավորման և զարգացման հիմնական գրավականը։ Իսկ ժողովրդավարացման առաջին պայմանը հանդիսանում է ազատ և թափանցիկ ընտրությունները։ Հենց ազատ և թափանցիկ ընտրությունները կարևոր պայման կհանդիսանան հանրության աջակցությունն ու վստահությունը վայելող իշխանության ձևավորման գործում, որը թույլ կտա փոխել ներկայիս իրավիճակը Հայաստանում վստահության մթնոլորտի փոփոխությունը կբերի նրան, որ Սփյուռքում և Արցախում ևս կբարձրանա վստահությունը Հայաստանի իշխանության նկատմամբ, որը թույլ կտա ավելի խոշոր համահայկական ծրագրեր նախագծել։

Վստահության մթնոլորտը կարևոր է նաև տնտեսության զարգացման համար, որն իր հերթին կազդի Սփյուռքից Հայաստան ներդրումների աճի վրա, իսկ նտեսական ներդրումները ավելի ուժեղ կապ կհաստատի Սփյուռքի և Հայաստանի միջև։ Պետք է երկրորդային պլան մղվի ավանդական Սփյուռք- Հայրենիք կապը, որն ենթադրում է զուտ օգնություն Հայրենիքին։ Հայաստանը նաև բիզնես ծրագրեր իրագործելու համար պետք է դառնա կարևոր կենտրոն։ Բիզնես ծրագրերի իրականացումն ու զարգացումն իր հետևից կբերի նաև մշակութային և այլ ոլորտների կապերի ուժեղացմանը Հայաստանի, Արցախի և Սփյուռքի միջև։ Հայկական աշխարհի շարժիչ ուժը պետք է դառնա Հայաստանի դինամիկ զարգացողտնտեսությունը։

Ժամանակակից աշխարհում հայկական բիզնեսները կարող են արդյունավետ գործիք հանդիսանալ աշխարհի տարբեր մասերում ապրող հայերին իրար հետ կապելու համար։ Տեխնոլոգիաների վրա հիմնված բիզնեսները իրենց առանձնահատկություններով ավելի մեծ հնարավորություններ են տալիս մարդկանց միջև գոյություն ունեցող տարածությունը կրճատելու և ավելի կայուն կապեր ստեղծելու համար;

Մեկ կարևոր հանգամանք պետք է հաշվի առնել, որ հայկական աշխարհի կենտրոնը պետք է միշտ լինի Հայաստանը, որը ոչ թե Սփյուռքը համալրող գործոն պետք է հանդիսանա, այլ Սփյուռքին դեպի իրեն ձգող ուժ:

«Քառօրյա պատերազմը ևս մեկ անգամ հաստատեց, որ հայ ժողովուրդը չունի դաշնակից: Հայաստանի միակ պաշտպանն ու դաշնակիցը հայկական բանակն է և աշխարհասփյուռ հայությունը: Իսկ առավել ուժեղ լինելու համար պետք է համախմբել հայ ժողովրդին մեկ կենտրոնի շուրջ: Հայ ժողովրդի ուժերը համատեղելու լավագույն գործիքը ժողովրդավար Հայաստանն է, որի դինամիկ զարգացող տնտեսությունը կկապի աշխարհի տարբեր վայրերում ապրող հայերին ու նաև կհանդիսանա համայն հայության զարգացման և անվտանգության երաշխավորը:

Ապրիլյան պատերազմի ռազմավարական վերլուծություն

Քաղաքագետներն այսօր նշում են Ապրիլյան պատերազմի սանձազերծման դրդապատճառների բազմաթիվ քաղաքական կողմեր: Սակայն, մեր կարծիքով, կասկածից վեր է, որ Ադրբեջանը հարձակվելուց առաջ հստակորեն հաշվի էր առել մի քանի հանգամանք:

Անցած տարիներին Ադրբեջանը ձեռք էր բերել մեծ քանակությամբ նորագույն զինատեսակներ, ճիշտ է, հիմնական մատակարարումները դեռ շարունակվում էին, սակայն մեծ մասն արդեն կար, ինչը մեծ վստահություն էին ներշնչել՝ անգամ, որ դա կարող է իր համար հաղթանակ ապահովել: Բացի այդ հարկ էր շտապել, քանի որ Ադրբեջանին հայտնի էր, որ թեև հայկական կողմը ևս ձեռք է բերում զենք, սակայն դրա մի զգալի մասը դեռ ճանապարհին է: Եթե դրան հավելենք, որ ադրբեջանական բանակի ծախսերը շեշտակիորեն կրճատվել էին, ապա կարելի է ենթադրել, որ, ըստ իրավիճակի, ճիշտ ժամանակն էր փորձել սանձազերծել կայծակնային պատերազմ:

Սակայն զուտ ռազմական դրդապատճառները այսքանով չէին սահմանափակվում: Եղանակներն Արցախում և Ադրբեջանում չոր էին, գետնի ամրությունը զրահատեխնիկայի համար բավարար էր: Ձյուն կար միայն լեռնային հատվածներում, իսկ հատկապես Սոթք-Քարվաճառում մարտական գործողությունների համար կարող էին լինել եղանակով պայմանավորված բարդություններ: Այս, ինչպես նաև Սոթք-Քարվաճառում ադրբեջանական ստորաբաժանումների դիվերսիաների հետևանքով հակամարտող երկու կողմերի համար էլ

հնարավոր խոչընդոտների պատճառով այս տարածքը դուրս մնաց Ադրբեջանի ԶՈՒ-ի հարձակման հիմնական ուղղություններից:

Ադրբեջանը վերջին երկու տարվա ընթացքում կատարել էր առնվազն 180 դիվերսիոն ներթափանցման փորձ՝ դրանց խորությունն ու բնույթը մեծացնելով:Միևնույն ժամանակ աճում էր նաև կրակային միջոցների կիրառման ծավալը[1]:Դիվերսիաները սցենարային առումով ևս փոփոխություն էին կրում: Հենց առաջնագծի մարտական հենակետերի վրա հարձակումից նրանց անցել էին թիկունք ներթափանցելու փորձերին, թիկունքային կապուղիները ականապատելուն և այլն: Դիպուկահարները ժամանակի հետ իրենց տեղը զիջեցին հրետանային միջոցներին: Հրետանին ևս սովորական կրակից անցել էր արդեն ԱԹՍ-ներով կրակի կառավարմանը, որի վառ օրինակն էր քառօրյա պատերազմի երրորդ օրը Մարտակերտի զորամասի թշնամու ԱԹՍ-ի հարձակումը, որի ընթացքումունեցան քզորամասումմեկ զոհ, երկուծանր վիրավոր, որոնցից մեկը մերջոկատի հրամանատար Աշոտ Գասպարյանը:

Ադրբեջանի գործողությունների քողարկումը և մարտավարությունը

Ադրբեջանը շուրջ երկու տարի մշտական լարվածությամբ, դիվերսիաներով, ականային պայքարով և հրետանու կրակով փորձեց հայկական բանակի ուշադրությունը բթացնել: Ընտելացնելով նման լարված իրավիճակին նրանք ժամանակի հետ սկսեցին նաև որոշակի ուժերի առաջքաշումը, հետո դրանց ակտիվ խուսավարումը հյուսիսից հարավ, այս զորամիավորումից այն զորամիավորում, առաջնագիծ ու կրկին հետ: Սա հին մեթոդ է, որով դիմացինին մոլորեցնում են: Այդ նոր ուժերի մեջ էին նաև հատուկ նշանակության ստորաբաժանումները, որոնք մաս-մաս բերվել էին առաջնագիծ և հետ չէին տարվել՝ փաստացի հասցվելով մոտ երկու բրիգադի ներուժի: Նույն ժամանակ, սակայն, Ադրբեջանական ԶՈՒ-երը դիմեցին նաև ռազմարվեստի նորարարական լուծումների: Դեռևս 1990-ականների երկրորդ կեսից ռազմարվեստում կիրառվում է առկա ուժերով, առանց մեծ ուժերի ու միջոցների ներգրավման հիմնական հարված հասցնելու մարտավարությունը: Առանձին ու հատուկ կուտակումներ տեղի չեն ունենում: Ադրբեջանըն այս անգամ հենց

այդպես գործեց. տեղում եղած բանակային կորպուսները կամաց-կամաց համալրելով՝ ոչ ամբողջ բանակի ներուժով փորձեց նույնն անել:

Միևնույն ժամանակ նշենք, որ ադրբեջանական բանակային կորպուսները բրիգադային երկու շարակազմով էին դասավորվել, ինչը օպերատիվ մակարադակում հստակ անակնկալ հարձակման համար հարմար մարտակարգ է: Ադրբեջանն օպերատիվ շարվածքում առկա այդ ուժերով ու միջոցներով փորձեց անակնկալ և որոշիչ հարված հասցնել, մարտավարական բնագիծը ճեղքելով դուրս գալ օպերատիվ խորություն: Դրա հաստատումն են հավաքված զորախմների ուժերը, ինչը հաստատվում է նաև հայկական ԶՈՒ-երի հետախուզական տվյալներով[2]: Հատկապես կարևոր էր կենտրոնական հատվածում կուտակած զորախումբը, որը ըստ պլանի՝ պիտի գործարկվեր մարտական գործողությունների միայն երկրորդ օրվանից հետո: Այս ամենը ապացուցվեց նաև խոցված մարտական ուղղաթիռի օդաչուների մոտ առկա փաստաթղթերով[3]: Կենտրանական հատվածում օպերատիվ շարվածքին ավելացվել էին նաև այլ ուժեր, որոնց առաջ քաշումն էլ ժամանակ էր պահանջում:

Բացի այդ, ակնհայտ է մի հետաքրքիր առանձնահատկություն ևս: Ադրբեջանական լրատվամիջոցներն առաջին օրը մինչև կեսօր լռում էին: Կեսօրին միանգամից անցան հարձակողական տեղեկատվական տեղատարափի, ընդ որում՝ սկզբում անթաքույց հպարտանալով, որ իրենք հարձակվել են և գրավել ինչ-որ բնակավայրեր ու բնագծեր: Բնակավայրերը նշվում էին զարմանալի օրինաչափությամբ ու հերթականությամբ: Նույն պլանի համաձայն գործում էին նաև Թուրքիայի լրատվամիջոցները: Սա նշանակում է, որ տեղեկատվական գործողությունները ևս նախօրոք պլանավորված են եղել՝ մարտական գործողություններին համահունչ սցենարով: Ադրբեջանական զորքերի հաջողությունները պետք է ուղեկցվեին համապատասխան տեղեկատվությամբ, սակայն երբ դրանք սկսեցին հաղորդվել ըստ նախնական գործողությունները ևս նախօրոք պլանավորված են եղել՝ մարտական գործողություններին համահունչ սցենարով: Ադրբեջանական զորքերի հաջողությունները պետք է ուղեկցվեին համապատասխան տեղեկատվությամբ, սակայն երբ դրանք սկսեցին հաղորդվել ըստ նախնական մշակված պլանի, արդեն չէին համընկնում մարտական գործողությունների հետ, քանի որ վերջիններիս ընթացքը ծրագրվածից էապես շեղվել էր: Այդ են վկայում հենց երկու ուղղությունում կենտրոնանալը և այդ ուղղությունների համեմատաբար հարթավայրային մասերում տանկային ուժերով հիմնական հարվածները,

օրինակ՝ Սեյսուլանի ուղղությամբ ճեղքման հարվածը տանկերով ու հետևակով: Այս տեղամասը պատահական չէր ընտրված, այն 4-րդ և 5-րդ ՊԾ-ների պաշտպանության տեղամասերի կցատեղին էր[4]: Հարվածների ուղղությունները ենթադրում են, որ հյուսիսից ու արևելքից հասցվող հարվածները Արցախի հյուսիսում նպատակ ունեին առավելագույնը գրավելու Մարտակերտը, Սարսանգի ջրամբարով և այլն: Ըստ ՊԲ-ի հայտնած տվյալների՝ այլ զորախմբերց բացի գործել է նաև 73-րդ հատուկ խումբը մինչև հազար զինծառայողներով[5]: Ըստ ադրբեջանական տվյալների՝ յուրաքանչյուրհատվածում գործի են դրվել 1-ին շարակազմի մեկական մոտահրաձգային բրիգադի ուժեր ու միջոցներ: Դրանք ուժեղացված են եղել հատուկ նշանակության երկու բրիգադների ուժերով, այդ թվում 777-րդ բրիգադի, ինչպես նաև 191-րդ լեռնահրաձգային բրիգադի ուժերը[6], որոնք հիմնականում գործել են հյուսիսում: Ըստ որոշ տեղեկությունների՝ եղել են նաև ուժերադրբեջանական 101-րդ և 52-րդ հատուկ նշանակության բրիգադների ուժերից: Ադրբեջանական զորքերի առաջին շարակազմում հիմնականում գործել են այս արհեստավարժ ուժերը, գրեթե չեն կիրառվել ժամկետային ծառայողներ, որոնք, հավանաբար, պիտի լինեին հաջողությունը զարգացնող շարակազմում: Դա հիմնավորվում է նրանով, որ հիմնական զոհերն արհեստավարժներ էին, ինչպես նաև այն դիրքերում, որտեղ մերձամարտից էին զոհվել, բոլորը դիվերսիոն հետախուզական խմբերի ծառայողներ էին: Հիմնական ուղղություններից յուրաքանչյուրում կենտրոնացված էին նաև կորպուսների ողջ տանկային և հրետանային ուժերը: Փաստորեն, ամեն կողմից գործել է մոտ երկու բրիգադ՝կորպուսի ողջ հրետանու և տանկային ուժերի հետ համատեղ: Ուղղություններին տրվել էր նաև մեկական հարվածային ուղղաթիռային էսկադրիլիա, որը ծածուկ տեղափոխվել էր մարտական գործողությունների շրջան: Այս ամենի մասին է փաստում նաև հակառակորդի կողմից հրետանային կրակի ինտենսիվությունը: Չորս օրվա ընթացքում ըստ որոշ տեղեկությունների հակառակորդը կիրառել է 120մմ-ից բարձր ավելի քան 30 000 հրետանային արկ, ինչը մեկ միջինից բարձր օպերատիվ ռազմագործողության համար նախատեսված զինամթերքի ծախս է: Ըստ ՊԲ հրամանատար գեներալ-լեյտենանտ Լ.Մնացականյանի՝ միայն երեք օրում թշնամին արձակել է ավելի քան 20.000 արկ, այն ժամանակ, երբ Արցախյան պատերազմի նախորդ փուլի հինգ տարում՝ ընդամենը 100.000 արկ:

Որպես ելակետային հաշվարկ նշենք, որ մեկ հրետանային համակարգի մարտապաշարը հաշվարկվում է 60-80 արկ: Եթե այս հաշվարկով դիտարկենք ու հաշվենք, որ մեկ հրանոթը կարող է կրակել օրական առավելագույնը մեկ մարտապաշար, ապա ստացվում է, որ

մարտական ակտիվ չորս օրում յուրաքանչյուր հրանոթի առավելագույն արագությամբ կիրառման դեպքում եղել է մոտավորապես 100 միավոր 120մմ-ից բարձր հրանոթ: Ավելի ցածրակտիվության դեպքում, ինչը ավելի հավանական է, կիրառվել է ավելի քան 150 հրանոթ:

Ադրբեջանական ԶՈՒ-ն, գործելով հինգերորդ սերնդի պատերազմների տրամաբանությամբ, կիրառելով նոր օպերատիվ լուծումներ, փորձել է նաև կատարել մարտավարական հնարամտություն, որը մի քանի անգամ փայլուն կերպով իրագործվել է ռազմարվեստի պատմության մեջ: Նման մարտավարությամբ ժամանակին հաղթանակի են հասել իսրայելական բանակը՝ 1973 թ., իրաքյան բանակը՝ 1986-1987 թթ. և ամերիկյան բանակը՝ 2003 թ.: Հարվածող խմբավորումների առաջին շարակազմում կիրառվել են միայն հատուկ նշանակության ուժեր, այդ թվում փորձ է արվել մարտավարական խորքում իջեցնելու օդային դեսանտ: Ապրիլի 2-ի առավոտյան խոցված ուղղաթիռը հենց նման փորձի ժամանակ է խոցվել: Անցնող ամիսների ընթացքում ադրբեջանական հատուկ նշանակության ստորաբաժանումները փորձում էին նաև լուծել խորքային դիվերսիաների խնդիրը: Ողջ 2012-2015 թթ. կատարելով մարտավարական դիվերսիաներ անմիջապես դիրքապահների ուղղությամբ՝ 2015 թ. ավարտից սկսած նրանք փորձում էին խորը ներթափանցումներ իրականացնել: Այս ողջ դիվերսիաների ընթացքում ադրբեջանական ուժերը կրում էին ծանր կորուստներ, սակայն միևնույն ժամանակ հետախուզում էին մեր ամբողջ պաշտպանական գոտին: Այսինքն այդ խմբերը խնդիր ունեին գրավելու առջևի բնագծերը կամ բացվածքներ ապահովելու այդ բնագծերում և միաժամանակ, թիկունքից հարված հասցնելով գումարտակային խորությամբ, խուճապ առաջացնելու:

Հիմնական զրահատանկային միջոցները շարժուն խմբերի հետ գտնվել են արդեն երկրորդ շարակազմում՝ փորձելով առաջին խմբերի հետ գործել բարձր ներդաշնակությամբ: Հյուսիսային ուղղությամբ ապրիլի 1-ի ուշ երեկոյան ու գիշերը դիվերսիոն խմբերն արդեն հասել են Թալիշ գյուղիհատված և բարձունքներում դիրքավորվելով՝ ապահովել են հրետանու կրակը, որն էլ իր հերթին համապատասխան պահին փորձել է արգելափակել ՊԲ-ի գումարտակների առաջխաղացումը: Այլ խմբեր փորձել են կատարել նույնը՝ ճանապարհների վրա ծուղակներ պատրաստելով: Առաջին իսկ հարվածների անակնկալությամբ և սրընթացությամբ ադրբեջանական հատուկ ստորաբաժանումներին հաջողվել է գրեթե գրավել Թալիշ գյուղը և ապահովել մոտակա գումարտակների արգելափակումը:

Միևնույն ժամանակ ադրբեջանական զորքերը հարված են հասցրել հարավային

ուղղությամբ տեղակայված հայկական ուժերի ՀՕՊ հրամանատարական կետերից մեկի ուղղությամբ:

Ապրիլի 2-ի լույս առավոտյան հակառակորդը սկսել է կիրառել օդուժ և հյուսիսային և հարավային ուղղությամբ, հիմնականում՝ ուղղաթիռներ, սակայն Թալիշի հատվածում եղել է նաև գրոհիչ ինքնաթիռ: 7-րդ ՊՇ-ի գումարտակների ուղղությամբ վաղ առավոտյան սկսվել է դիվերսիոն խմբի հարձակում: Մասնավորապես՝ դիվերսիոն հետախուզական խումբը, զինված նաև փոքր տրամաչափի ականանետերով, հարձակում է գործել երրորդ գումարտակի դիրքերի ուղղությամբ: Նույն ժամանակ ադրբեջանական մարտական դիրքերից սկսվել է ինտենսիվ կրակ բոլոր կրակային միջոցներից: Արդեն 6:30 սահմաններում հակառակորդը կիրառել է նաև մարտական ուղղաթիռներ: Այս ամենը համակարգված ու պլանավորված հարձակում էր: Ադրբեջանական ուղղաթիռներից մեկին երրորդ գումարտակի ԴԶՀ ջոկի հրաձիգ-զենիթային, շարքային Գևորգ Մանուկյանը խոցել է “Իգլա” ԿԶՀՀ-ով: Ժամը 11:40-ի սահմաններում երկրորդ գումարտակի մեծ տրամաչափի գնդացիրների կրակով 6-րդ և 7-րդ ՊՇ-ների միջանկյալ հատվածում խոցվել է երկրորդ ուղղաթիռը: Այս ուղղաթիռներըակտիվորեն կրակ էին վարում հայկական դիրքերի ուղղությամբ:

Գործելով այս կերպ և ձգտելով քողարկել իրենց հարվածը, որպեսզի ապահովվի հանկարծակիության գործոնը, ադրբեջանական զորքերը նոր ուժերի ու միջոցների ներգրավումն իրականացրել են ընթացքում՝ մարտավարական խորությունում ունենալով երկրորդ շարակազմ և պահեստային ուժեր: Մեծ ուժեր այս ընթացքում խորքից առաջ չեն տեղափոխվել, առավելագույնը՝ առանձին գումարտակներս և ուղղաթիռներ:

Եզրակացություն

Վատ բան է պատերազմը, թե լավ, բայց փաստն այն է, որ քառօրյա պատերազմը կայծակի պես եկավ մաքրելու թուխպերը Հայոց աշխարհի երկնքից, մաքրելու ծանր, հեղձուցիչ ներքին մթնոլորտը, վառ լույս նետելու մեր տուն-ամրոցի բոլոր անկյունները, չթողնելու խավարի ոչ մի ծվեն՝ մեր Հայրենական հարկի ներքո:

Քառօրյա պատերազմը իր հրթիռների ու արկերի պայթյունների լույսի ներքո բազում ճշմարտություններ բացահայտեց…: Այդ ճշմարտությունները մինչև այդ էլ կային, սակայն ճանապարհ չէին ստանում…: Արդյունքում սկսվեց զինված ուժերի մաքրման գործընթացը…, իսկ առանց դրա չի կարող տեղի ունենալ ընդհանրապես Հայոց պետության մաքրման, հզորացման և նոր բարձր տեխնոլոգիական պատերազմների դարաշրջանում մարտունակ ու հուսալի բանակ ստեղծելու գործընթացը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվել է, ապրիլյան քառօրյա պատերազմի մասին կան շատ վերլուծական աշխատանքներ, նյութեր տարբեր թերթերում և ամսագրերում: Քառօրյա պատերազմը ցույց տվեց մեր երիտասարդ զինվորների ու սպաների հայրենասիրությունը, սեփական երկիրը պահելու և պահպանելու պատրաստակամությունը, որը կարող է օրինակ ծառայել հաջորդ սերունդներին: Այս ամենը հաշվի առնելով՝ առաջարկում եմ թեման ընդգրկել ուսումնական ծրարգերի մեջ, ինչպես նաև պատմության և նախնական զինվորական պատրաստության դասագրքերի մեջ՝ որպես առանձին ուսումնասիրվող թեմա 9- րդ դասարաններում:

Օգտագործված գրականության ցանկ

1. http://www.yerkir.am

2. Հովհաննիսյան Արծրուն ՝ Yelaket.am

3. www.mediamax.am

4. Մինասյան Սերգեյ ՝ ,,Ապրիլյան չորսօրյա պատերազմ,, ,,Անդին,, ISSN 1829-3611, 4.04.2016թ.

5. Մնացական Խաչատրյան՝ ,,Արցախի 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը և պատերազմների էվոլյուցիան,, , ,,Անդին,, ISSN 1829-3611, 4.04.2016թ.

6. www.wikipedia.org

7. www.aniarc.am